Հաշվետվություն

ՀՀ Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղապետարանի՝ համայնքի բնակիչներին ներկայացված ընդհանուր ժողովից՝ կայացած 2011 թվականի հուլիսի 12-ին ,2011 թվականի առաջին կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ.

Համառոտ տեղեկություններ՝

1.Տնտեսությունների թիվը՝	437
2.Բնակչության թիվը՝	1842
որից՝	
տղամարդ՝	858
կին՝	947
3.Կենսաթոշակառուներ՝	195
4.Նպաստառուներ՝	16
5.Հայրենական պատերազմի մասնակիցներ՝	2
6.Արցախյան ազատամարտիկներ՝	26
7. Զոհված ազատամարտիկ՝	1
8. Դպրոցի երեխաների թիվը՝	192
9.ՈՒսուցիչների թիվը՝	22
10.Նորածիններ՝	7
11.Մահացածներ՝	6
12.Գազաֆիկացված բնակարանների թիվը՝	221
13.Փախստական ընտանիքներ՝	16

Համայնքն ունի՝

1.Ակումբ գյուղապետարան

2.Կապի հանգույց

3.Բուժ ամբուլատորիա

4. Մանկապարտեզ/չգործող/

5.Գրադարան

6.Առևտրի կետեր/7/

7.Հուշարձան կոթող

8.Կիսակառույց եկեղեցի

2011 թվականի փաստացի ցանքերը

1. Հացահատիկ՝	52հա
2. Բոստան՝	28հա
3.Բանջարեղեն՝	53հա
4.Պտուղ՝	11հա
5.Խաղող՝	2.3հա
6.Բազմամյա խոտհարք՝	133հա
7.Անմշակ հողեր՝	82հա

Փաստացի անասնագլխաքանակ

1.Խոշոր ողջերավոր անասուններ՝	240
2.Խոզեր՝	40

3.Մանր եղջերավոր անասուններ՝ 176

4.Ձիեր՝ 1

5.Թռչուններ՝ 900

6.Մեղվաընտանիքներ՝ 10

2011 թվականի տարեկան բյուջե /1-ին կիսամյակ/

Սեփական եկամուտներ՝

1.Հողի հարկ՝ 2.7 մլն.դ

2.Գույքահարկ՝ 1.4մլն.դ

3.Վարձավճար՝ 0.4 մլն դ

Ղեկավարվելով ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի պահանջով և Արմավիրի մարզպետարանի ամենօրյա օժանդակությամբ՝2011 թ տնտեսական տարին սկսեցինք և շարունակում ենք ավագանու կողմից ընդունված ծրագրերին համապատասխան:

2011 թվականի 1-ին կիսամյակում ընդունվել է ավագանու 4 /չորս/նիստ: Նիստերի ընթացքում հիմնականում քննարկվել են 2011 թվականի տարեկան բյուջեի նախագծի հաստատման, ընդունման և այն իրատեսորեն կատարման վերաբերյալ հարցեր:

Նիստերում քննարկվել են նաև գարնան գյուղատնտեսական աշխատանքներին բնակչության աջակցության,գյուղի փողոցների բարեկարգման,աղբահանության, սանիտարական վիճակի բարելավման և սոցիալական այլ ոլորտի հարցեր:

Գյուղապետարանի, ինչպես նաև ավագանու անդամների ամենօրյա ուշադրությանն են արժանացել համայնքի բնակիչների կողմից բարձրացված հարցերի քննարկումն ու իրագործումը և մարզպետարանի կողմից տրված հանձնարարականների կատարման խնդիրները:

2011 թ 1-ին կիսամյակում մարզպետարանից ստացել և համագյուղացիներին բաժանել ենք /ըստ հեկտարների/ 33 /երեսուներեք/

կիլոգրամ մկնդեղ՝ կրծողների դեմ պայքար իրականացնելու համար: Կատարվել են բացատրական աշխատանքներ մկնդեղի ճիշտ և զգուշորեն օգտագործման համար:

1-ին կիսամյակում համայնքի բնակիչներից ստացվել են տարբեր բնույթի 35/եռեսունհինգ/ դիմումներ: Բոլոր դիմումները քննարկվել են ժամանակին և տրվել են համապատասխան լուծումներ:

Ակնաշենի գյուղապետարանը Արմավիրի մարզպետարանից և այլ կազմակերպություններից ստացել է 66/վաթսունվեց/ տարբեր բնույթի պաշտոնական գրություններ:

2011 թվակնի 1-ին կիսամյակում բնակիչներին տրվել է 286/ երկու հարյուր ութսունվեց/ տեղեկանքներ՝ ըստ պահանջի ներկայացնելու համար , ընդունվել են 3/ երեք/ որոշումներ և արձակվել 2/երկու/ կարգադրություն:

Տարբեր կազմակերպությունների ուղարկվել են 60/վաթսուն/ տարբեր բնույթի գրություններ:

Գյուղապետարանը, ավագանու անդամների հետ համատեղ աջակցել է համայնքի բնակիչներին գյուղատնտեսական տարին սկսելու և այն բարեհաջող ավարտելու համար:

Վաղ գարնանը մաքրվել և վերանորոգվել են ներտնտեսային ջրատարները:Մաքրվել և բարեկարգվել են կենտրենական փողոցի եզրերը և գերեզմաններ տանող ճանապարհը:

2011 թվականի մայիսի 9-ին ՝Հայրենական մեծ պատերազմի 66-րդ և Շուշիի ազատագրման 17 -րդ տարեդարձի առթիվ համայնքում կազմակերպվեց մեծ միջոցառում, որին մասնակցում էին պատերազմի վետերաններ, Արցախյան պատերազմի ազատամարտիկներ և համայքի բնակիչներ ու հյուրեր: Միջոցառումն ավարտվեց մեծ տոնախմբությամբ, պատերազմի մասնակիցներին , Արցախյան պատերազմի հաշմանդամին և Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկի այրուն ,տրվեցին դրամական պարգևներ:

Մեծ շուքով տոնվեց նաև հունիսի 1-ը, երեխաների պահպանության օրը:

Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում միշտ եղել է գյուղի միջնակարգ դպրոցը,որին աջակցել ենք հնարավորության սահմաններում:

Գյուղապետարանը սերտ աջակցում է գյուղի երիտասարդության հետ,նրանց շրջանում տանելով դաստիարակչական աշխատանքներ,նրանց մեջ սերմանելով աշխատասիրություն և հարգանք մեծերի և միմյանց նկատմամբ:

Գյուղապետարանը սերտ համագործակցում է Վաղարշապատի զինվորական կոմիսարյատի հետ: 2011 թ 1-ին կիսամյակին զորակոչվել են 3 զինզկոչիկներ:

1-ին կիսամյակում մասնակի վերանորոգվել են միջհամայնքային ճանապարհները, կանաչապատվել և բարեկարգվել է ակումբի դիմացի հանգստյան գոտին:

Հարգելի համագյուղացիներ,գյուղապետարանը ի նպաստ համայնքի բարգավաճման ՝ ունի շատ ծրագրեր : Այն իրագործելու համար անհրաժեշտ են միջոցներ, որանք գոյանում են համայնքի սեփական եկամուտներից:

Ձեր կողմից կան թերացումներ: ՈՒՆենք սեփականատերեր,որոնք սովորություն են դարձրել տարիներ շարունակ չկատարել հարկային պարտավորությունները :

ՈՒՆենք նաև շատ պարտաճանաչ սեփականատերեր, որոնք առանց հիշեցման, ամեն տարի, կատարում են իրենց հարկային պարտականությունները:

Օգտվելով առիթից, կոչ եմ անում, որ հնարավոր կարճ ժամկետում կատարեք Ձեր հողի հարկի և գույքահարկի վճարումները,որը հնարավորություն կտա գյուղապետարանին իրագործելու համայնքի բյուջեով նախատեսված ծրագրերը՝ համայնքի զարգացման աշխատանքների կատարման համար:

Ձեզ եմ ներկայացնում 2011 թ 1-ին կիսամյակում բյուջեի սեփական եկամուտների կատարողականը՝

հ/հ	Եկամուտների անվանումը	1-ին կիսամյակի պլան	Փաստացի կատարողական	Պլանի կատարման %-ը
1	Հողի հարկ	2750.0	1924.9	70.0
2	գույքահարկ	1403.0	1003.4	71.5
3	Տեղական տուրք	119.0	82.5	69.3
4	վարձավճար	400.0	544.3	136.1
	Ը ն դ ա մ ե ն ը	4672.0	3555.1	76.1

Ինձպես նկատեցիք ներկայացված թվերից, 1-ին կիսամյակի սեփական եկամուտների պլանները չենք կատրել: Եթե այս ընթացքով

շարունակենք,ապա համայնքում ոչ մի դրական աշխատանքներ չենք կարող կատարել:

Համայնքում ընթանում են բերքահավաքի աշխատանքներ:Շուտով կսկսվի նաև հացահատիկի և բոստանային կուլտուրաների բերքահավաքը: Հացահատիկի բերքահավաքի անկորուստ կատարման համար գյուղապետարանը՝ ավագանիների հետ միասին , ձեռնարկում են միջոցառումներ այն սեղմ ժամկետում կատարելու համար:

Բնակչության շրջանում տարվում են բացատրական աշխատանքներ հացահատիկի դաշտերում հակահրդեհային կանոնների պահպանման համար:

Հարկ եմ համարում կրկին զգուշացնելու համայքի այն բնակիչներին, ովքեր մշակում են իրենց սեփականաշնորհված հողերին կից համայնքային հողեր, ներկայանալու գյուղապետարան՝ դրանց օրինականացման համար, այլապես, նշված հողակտորները կ՝օտարվեն՝ օրենքով սահմանված կարգով:

Ավարտելով ելույթս,հույս եմ հայտնում, որ համայնքի բնակիչների կողմից կկատարվեն հետևողական աշխատանքներ՝ ընթացիկ տարին բարձր ցուցանիշներով ավարտելու համար:

Օգտվելով առիթից, որ համայնքի ընդհանուր ժողովին մասնակցում է ՀՀ Արմավիրի փոխմարզպետ՝Պարոն Դ.Սամսոնյանը, կխնդրենք իր միջամտությունը՝ համայնքի նոր թաղամասերում հոսանքագծեր անցկացնելու համար:

Ակնաշեն համայնքի ղեկավար՝ /Մ.Միսակյան/